ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Տելեկոմ Արմենիա» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, ք. Երևան 0014, Ազատության պող.24/1,
Հեռ.՝ (+37410) 410410
էլ. փոստ՝ info@telecomarmenia.am
Հաշվետվություն թիվ 5, 31.12.2024

Ստորև ներկայացվում է «Տելեկոմ Արմենիա» ԲԲ ընկերության վարկային պարտավորությունների մարման վերաբերյալ էական փոփոխությունը 31.12.2024թ. դրությամբ:

Ծրագրային Ազդագրի 3.2.6 «Ցանցային ռիսկեր» և 3.13 «Էական պայմանագրերը» կետերում նշված՝ 26/05/2022 թվականին Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի (IFC), Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (EBRD) և «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի (բոլորը միասին այսուհետ՝ Վարկատուներ) հետ կնքված վարկային պայմանագրի շրջանակներում «Տելեկոմ Արմենիա» ՓԲ ընկերությանը (այժմ՝ «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ) տրամադրված Առաջնահերթ մարման վարկերը՝ ընդհանուր 45 միլիոն ԱՄՆ դոլար գումարով, 16.12.2024 թվականի դրությամբ ամբողջությամբ մարվել են: Ըստ պայմանագրի, մայր գումարի մարումների վերջնաժամկետ էր սահմանված 2029 թվականը:

Ստորև ներկայացվում են դատական գործերի վերաբերյալ էական փոփոխությունները 31.12.2024թ. դրությամբ.՝ ի լրումն 30.09.2024թ. թիվ 4 հաշվետվության և Ազդագրի.

1. «Թիմ» ՓԲԸ կողմից 13.08.2024թ.-ին ՀՀ սահմանադրական դատարան (թիվ ՎԴ/0693/05/21 վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 29.01.2024թ. որոշման կապակցությամբ) ներկայացված անհատական դիմումը, որը ՀՀ սահմանադրական դատարանի 29.08.2024թ. որոշմամբ ընդունվել էր քննության, նույն դատարանի 05.11.2024թ. թիվ ՍԴԱՈ-171 աշխատակարգային որոշմամբ որոշվեց ««ԹԻՄ» փակ բաժնետիրական ընկերության դիմումի հիման վրա՝ մինչև 2021 թվականի մարտի 3-ի խմբագրությամբ գործող «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի և 30-րդ հոդվածի 9-րդ մասի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3 և 67-րդ հոդվածների, 124-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:
2. ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովը 20.08.2024թ. «ՀՀ վարչական

դատարանի թիվ ՎԴ/0693/05/21 վարչական գործով 2023 թվականի մայիսի 11-ի վճիռը կատարելու մասին» թիվ 490-Ա որոշումն անվավեր ճանաչելու (վիճարկման) հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան: Հարուցվել է թիվ ՎԴ/15547/05/24 վարչական գործը, որը գտնվում է քննության փուլում: